ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

"24" մայիսի 2023թ. Ք. Սևան

2023թ. մայիսի 24-ին, ժամը 12:պ00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանում կայացած «Ճան շին» ՍՊ ընկերության կողմից Լճաշենի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 3-րդ լսումների

Մասնակցում էին՝ համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ Հայկ Ղուկասյանը, համայնքի բնակիչներ, «Ճան շին» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Ալավերդյանը, նախագծող Սահարուն Գևորգյանը:

Հանրային լսումները վարեց Հ. Ղուկասյանը: Նա ներկայացնելով հանրային լսումների նպատակը և մասնակիցներին, խոսքը փոխանցեց նախագծող Ս. Գևորգյանին:

Ս. Գևորգյանը նշեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջների, 2-րդ լսումներից հետո ՀՀ շրջակա միջավայրի նախարարության "Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն" ՊՈԱԿ-ի մասնագետի մասնակցությամբ, այդ ՊՈԱԿ-ի կողմից ընկերությանը տրվել է տեխնիկական առաջադրանք, որի համաձայն կազմվել է հանքավայրի արդյունահանման աշխատանքների նախագիծը, ՇՄԱԳ հաշվետվությունը, հանքի փակման ծրագիրը, թափոնների կառավարման պլանը: Այսօրվա քննարկման արդյունքում եթե ստանանք մասնակիցների համաձայնությունը, ՇՄԱԳ հշվետվությունը կից փաստաթղթերի փաթեթով կներկայացվի տարածքային կառավարման նախարարություն որտեղից կուղարկվի շրջակա միջավայրի նախարարության փորձաքննության: Այնտեղից ՇՄԱԳ հաշվետվությունը կուղարկվի փորձաքննության՝ նախարարության բոլոր վարչություններ և մի քանի այլ նախարարություններ: Դիտողություններ, առաջարկություններ ստանալու դեպքում հաշվետվությունը կուղարկվի լրամշակման այնուհետև 4-րդ լսումների ժամանակ ՇՄՆԳ ՊՈԱԿԻ մասնագետները կներկայացնեն համայնքի քննարկմանը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջների և տեխնիկական առաջադրանքի կազմված ՇՄԱԳ հաշվետվության մեջ մանրամասն ներկայացված են տեղեկություններ հանքավայրի, նախագծվող տարածքում պաշարների, օգտակար հանածոյի որակի, նախատեսվող արդյունահանման աշխատանքների տեխնիկա-տեխնոլոգիական լուծումների, շրջակա միջավայրի ելակետային վիճակի վերաբերյալ: Մանրամասն հաշվարկներով տրվել են հանքարդյունահանման աշխատանքների հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր սպասվելիք բոլոր ազդեցությունները:

Էկո-ցենտր համակարգչային ծրագրով կատարվել են արտանետումների ցրման հաշվարկներ, այսինքն համակարգիչ են ներմուծվել նախատեսվող աշխատանքների պարամետրերը, վառելիքի հաշվարկային ծախսը, քամու արագություն, օդի ջերմաստիճան

և այլն որոնց հիման վրա համակարգիչը տվել է արտանետումների այդ թվում մուր, գազեր, փոշի տարածման հնարավոր սահմանները և պատկերները: Հիմնվելով այդ հաշվարկների արդյունքների վրա կարելի է վստահաբար ասել որ արդյունահանման աշխատանքների արդյունքում սպասվելիք ազդեցությունները կլինեն թույլատրելի սահմաններում: Աշխատանքների ազդեցության սանիտարական գոտին կազմում է 500մ և այդ գուտուց դուրս ազդեցությունը կլինի զրոյական:

Ուսումնասիրելով հնարավոր ազդեցությունները ՝՝Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների կանխարգելման, նվազեցման ուղված բնապահպանական միջոցառումների բնութագիրը՝՝ բաժնում առաջարկվում են հիմնավոր միջոցառումներ որոնց կատարման դեպքում նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը կկանխարգելվի կամ կհասցվի նվազագույնի: Բոլոր այն ազդեցությունները որոնք հնարավոր չի լինի վերացնել՝ ընկերության կողմից, սահմանված կարգով, կփոխհատուցվեն:

Հնչեցին հարցեր բնապահպանական միջոցառումների, համայնքի սոցիալտնտեսական զարգացման ծրագրերին ընկերության մասնակցության, բացվելիք աշխատատեղերի վերաբերյալ:

«Ճան շին» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Ալավերդյանը նշեց, որ ընկերությունը միշտ մասնակցություն է ունեցել համայնքի սոցիալտնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը և հետագայում ևս կշարունակի աջակցել համայնքին:

Ամփոփելով լսումների արդյունքները Հայկ Ղուկասյանը նշեց, որ ողջունելի է այդ ընկերության նշված գործունեությունը և հույս հայտնեց, որ կշարունակվի համայնքի և ընկերության միջև համագործակցությունը, ստեղծվում են աշխատատեղեր, ընկերությունը աջակցում է համայնքի զարգացման ծրագրերին և կշարունակի այդ աջակցությունը: Ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության և ընկերության գործունեության վերաբերյալ համայնքի կողմից առարկություններ չկան և հաջողություններ մաղթեց ընկերությանը: